պատմութեան մէջ պէտք է արձանագրուի «հակահայկական պոգրոմային ճառ» անունով։ Այդ ճառի մէջ բոլշեւիկների կողմից Վրաստանի դէմ ձեռնարկուած անիրաւ պատերազմը ներկայացուած է իբրեւ ստոր դաւ, որ··· դեկը կորցրած «թշուառական հայ ժողովուրդը», մարդկային եւ հարեւանական բոլոր սրբութիւնները ոտքի տակ տալով, նիւթել էր Վրաստանի Հանրապետութեան դէմ՝ նրան կործանելու նպատակով···

Պատերազմական թոհուբոհի մէջ այս ճառը վայրկենապէս պոգրոմային մթնոլորտ ստեղծեց Թիֆլիսում եւ Վրաստանի միւս հայաբնակ վայրերում։ Թշնամու յաղթական առաջխաղացութիւնից դաղդած վրաց ամբոխը, իր հեղինակաւոր առաջնորդի բերնից լսելով, թէ Վրաստանի դէմ արշաւողները ռուս բոլշեւիկները եւ նրանց հայ ու վրացի մանկլաւիկները չեն, այլ «թշուառական հայ ժողովուրդն» է՝ անսահման ցասումով էր լցուել դէպի վերջինս։ Բնականաբար այս ցասման անմիջական զոհը պիտի լինէր Վրաստանի հայութիւնը, որի սարսափահար աչքերի առաջ նորից ցցուեց 1918–1919-ի ձմրան հալածանքների մղձաւանջը։ Սարսափը մեծ էր մանաւանդ այն պատճառով, որ հայ-վրացական պատերազմի ժամանակ Ժորդանիան դէթ խօսքով անմեղ էր յայտարարում հայ ժողովուրդը եւ իր պաշտպանութեան տակ առնում, իսկ այժմ նրա թունաւոր նետերը հէնց այդ հայ ժողովրդի դէմ էին ուղղուած···

Մինչդեռ վիրահայ ժողովուրդը ահ ու դողով սպասում էր իր շուրջը խտացած մթնոլորտի պոռթկմանը, առանց նոյնիսկ ինքնապաշտպանութեան միջոցների մասին խորհել կարենալու՝ Թիֆլիս հասան Հայաստանի Փետրուարեան ապստամբութեան լուրերը եւ ամէն ոք տեսաւ, որ «թշուառական հայ ժողովուրդը» ոչ միայն ոեւէ դաւ չէ նիւթել Վրաստանի Հանրապետութեան դէմ, այլ եւ սրա վրայ արշաւող բոլշեւիկեան ուժերի թիկունքում ապստամբութիւն կազմակերպելով՝ ինքնաբերաբար ձեռք է մեկնում նոյն բռնապետութեան դէմ պայքարող վրաց ժողովրդին···

Այսպիսով, Փետրուարեան ապստամբութիւնը ոչ միայն փրկեց Հայաստանի բանտերում բոլշեւիկեան դահիճների կացիններին սպասող հարիւրաւոր հայ բանտարկեալների կեանքը, այլ եւ ազատեց Վրաստանի հայութիւնը անխուսափելի պոգրոմներից։

Սակայն, ի՞նչն էր դրդում Ժորդանիային այսպիսի մի ահաւոր ճառ արտասանելու Վրաստանի Սահմանադիր Ժողովում։ Մի՞թէ նա չգիտէր, թէ հայ ժողովուրդը ի՞նչ վերաբերմունք ունէր դէպի այն ոճրագործ վոհմակները, որոնք Վրաստանի Հանրապետութեան դէմ դուրս գալուց առաջ, թիւրքերի գործակցութեամբ յօշոտել էին Հայաստանի Հանրապետութիւնը։ Մի՞թէ նա անտեղեակ էր, թէ այդ վոհմակների տիրապետութեան տակ ի՞նչ սոսկումներ էին կատարւում Հայաստանի բանտերում եւ բանտերից դուրս,— սոսկումներ, որոնք ստիպում էին հայ ժողովրդին մինչեւ իսկ թիւրքերի «մեծասրտութեանը» ապաւինել՝ բոլշեւիկեան կարմիր դահիճների երեսը չտեսնելու համար։ Վերջապէս, մի՞թէ Ժորդանիան չգիտէր, թէ իր ճառը ի՞նչ օրհասական նշանակութիւն կարող էր ունենալ վիրահայ ժողովրդի համար, որ այնքա՜ն պատրաստակամութեամբ ընդառաջ էր գնում վրաց կառավարութեան բոլոր պահանջներին՝ ի սրտէ ցանկանալով, որ վերջինս կարողանայ ազատել Վրաստանը բոլշեւիկեան տիրապետութեան պատուհասից։

Ժորդանիան գիտէր այս ամէնը։ Բայց եւ այնպէս նրան այդ ճառն անհրաժեշտ էր թւում ռազմաքաղաքական նկատումներով։ Նա տեսնում էր, որ վրացիք դժկամակում էին կռուել ռուս բոլշեւիկների դէմ։ Դժկամակում էին ոչ թէ այն պատճառով, որ նրանց սիրում էին, այլ որովհետեւ նրանց վրայ նայում էին իբրեւ Ռուսաստանի վրայ, որի դէմ պատերազմելը իրենց ուժերից վեր էին համարում։ Եւ ահա այս մտայնութիւնից առաջացած յուսալքութիւնը փարատելու համար, Ժորդանիան թեթեւ սրտով չանթեր էր արձակում «թշուառական հայ ժողովրդի» դէմ։ Հոգ չէր, թէ սրանից ինչ փորձանքներ կը ծագէին վիրահայ զանգուածների համար։

Ժորդանիան փորձով գիտէր, որ այսօրինակ «անպատեհութիւնները» ժամանակի ընթացքում մոռացւում են։ Գլխաւորն այն էր,